14.03.25 - 14.03.25
14:30
Անցանց
Գրանցումը փակ է
☐

Պահպանել Google օրացույցում
ԵՊՀ Սարգիս և Մարի Իշմիրյանների անվան գրադարան, 503 ընթերցասրահ

Ս.թ. մարտի 14-ին՝ ժամը 14:30-16:00-ն, ԵՊՀ Սարգիս և Մարի Իշմիրյանների անվան գրադարանի 503 ընթերցասրահում տեղի կունենա «Դասագրքաստեղծման մարտահրավերներն ու լուծումները. հանդիպում դասագրքերի հեղինակների հետ» խորագրով հանդիպում-քննարկում:

Հանդիպման բանախոսներն են.

- ***Սմբատ Գոգյան*** *(«Մաթեմատիկայի» 5-8-րդ դասարանների դասագրքերի համահեղինակ, «Քառակուսի» հիմնադրամի տնօրեն)*

- ***Սոկրատ Մկրտչյան*** *(«Մաթեմատիկայի» 1-4-րդ դասարանների դասագրքերի հեղինակ)*

- ***Արաքս Մանուչարյան*** *(«Հասարակագիտության» 7-րդ և 10-րդ դասարանների դասագրքերի համահեղինակ, դպրոցում ֆինանսական գրագիտության առարկայի ներդրման ջատագով)*

Քննարկումը ծավալվելու է հետևյալ հարցերի շուրջ.

- *Որո՞նք են դասագրքերի ստեղծման և գնահատման տարբեր փուլերին բնորոշ դժվարություններն ու դրանց հաղթահարման հնարավոր ուղիները:*

- *Սովորողների նախասիրությունները, սոցիալական մեդիան և նոր տեխնոլոգիաներն ինչպիսի՞ ազդեցություն ունեն մաթեմատիկայի ուսուցման, դասագրքերի բովանդակության վրա:*

- *Ինչպիսի՞ն են մաթեմատիկայի դասավանդման հեռանկարները՝ հաշվի առնելով արհեստական բանականության և մեքենայական ուսուցման*

զարգացումները:

- *Որո՞նք են նոր դասագրքերում կիրառված նորարարական մոտեցումները, գաղափարներն ու անսովոր լուծումները:*

- *Մաթեմատիկա և ֆինանսական գրագիտություն, մաթեմատիկա և 21-րդ դարի հմտություններ:*

- *Դասագրքերի մասնակցային բարելավում՝ ուսուցիչների և աշակերտների արձագանքների ներառման միջոցով:*

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1
(+37460) 710000
info@ysu.am